Հարգելի տիկին Ղուկասյան,

Ի պատասխան ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Արփինե Հովհաննիսյանին ուղղած Ձեր 25.11.2017թ. -ի հարցման տեղեկացնում ենք, որ հիմք ընդունելով ‹‹Ազգային ժողովի կանոնակարգ›› սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածը՝ յուրաքանչյուր ամսվա երկրորդ ուրբաթ օրը կազմակերպվում է քաղաքացիների ընդունելություն, որը կազմակերպում է ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալ Արփինե Հովհաննիսյանը՝ անձամբ կամ իր աշխատակազմի միջոցով: ՀՀ Ազգային ժողովի վեցերորդ գումարման առաջին նստաշրջանում ընդունելություններ չեն կազմակերպվել՝ հաշվի առնելով, որ խորհրդարանը դեռևս ամբողջ ծավալով չէր սկսել իր աշխատանքները: Երկրորդ նստաշրջանի ընթացքում արդեն երեք անգամ կազմակերպվել է քաղաքացների ընդունելություն, որին նախապես հերթագրվել և մասնակցել են հինգ քաղաքացիներ: Ընդունելությունների ժամանակ քաղաքացիների կողմից հիմնականում բարձրացվել են անձնական բնույթի խնդիրներ, և ներկայացվել է մեկ օրենսդրական առաջարկ, որը ներկայումս գտնվում է քննարկման փուլում: Հաշվի առնելով ‹‹Անձնական տվյալների պաշտպանության մասին›› ՀՀ օրենքի կարգավորումները՝ ընդունելությանը ներկայացած քաղաքացիների անձնական տվյալները, այդ թվում՝ անուն-ազգանունը, դիմումների բովանդակությունը, լուսանկարները և այլ անձնական տվյալները չեն կարող տրամադրվել:

Հարգանքով՝

ԱԺ նախագահի տեղակալ Արփինե Հովհաննիսյանի աշխատակազմ